ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Աշխատասիրությամբ Վանո Եղիազարյանի

ԵՐԵՎԱՆ

ԱՐՄԱՎԻՐ

2017

ՀՏԴ 821.19-1 Նահապետ Քուչակ
ԳՄԴ 84 (5Հ) - 5
Ն 251

Գիրքը տպագրվում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի ներհամալսարանական դրամաշնորհի շրջանակներում, ՎՊՀ գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակության է երաշխավորել ՎՊՀ գրականության ամբիոնը

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝
բ. գ. թ. Արմեն Ավանեսյան
բ. գ. թ., դոցենտ Հերմինե Բաբուռյան
Լևոն Սարգսյան

ԳՐԱԽՈՍՆԵՐ՝
բ. գ. դ. Հենրիկ Բախչինյան
բ. գ. դ., պրոֆեսոր Թովմաս Պողոսյան

Նահապետ Քուչակ
Ն 251 Աշուղական երգեր /Աշխատ. Վ. Եղիազարյանի; Խմբագիրներ՝ Ա. Ավանեսյան, Հ. Բաբուռյան, Լ. Սարգսյան, Երևան, Արմավ, 2017, - 172 էջ:

Քուչակ Վանեցին կամ Նահապետ Քուչակը 16-րդ դարի աշուղ է, ում անունը հայագիտության մեջ թյուրիմացաբար կապվել է հայրենների երգաշխարհի հետ: Նրա աշուղական երգերն առանձին ժողովածուով չեն տպագրվել: Սույն գրքում տպագրվել են Քուչակի հայերեն, ինչպես նաև թուրքերեն երգերը, վերջինները՝ հայատառ թուրքերենով և հայերեն զուգադիր թարգմանությամբ: Գիրքը հասցեագրվում է բանասերներին, պատմաբաններին, ուսանողներին և կարող է ծառայել որպես ուսումնական օժանդակ ձեռնարկ բուհերի բանասիրական ֆակուլտետի ուսանողների համար:

ՀՏԴ 821.19-1 Նահապետ Քուչակ
ԳՄԴ 84 (5Հ) - 5

ISBN 978-9939-863-68-9

© Վանո Եղիազարյան, 2017
© «Արմավ» հրատարակչություն, 2017

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ՔՈՒՉԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ: Հայագիտության մեջ աշուղ Քուչակին և (կամ) նրա ստեղծագործությանն անդրադարձել են Ղ. Ալիշանը[1], Ա. Տևկանցը[2], Գ. Լևոնյանը[3], Կ. Կոստանյանցը[4], Տ. Պալյանը[5], Մ. Աբեղյանը[6], Հովի. Թադևոսյանը[7], Ա. Չոպանյանը[8], Հ. Աճեմյանը[9], Տ. արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը[10], Աս. Մնացականյանը[11], Օ. Եգանյանը[12], Շ. Գրիգորյանը[13], Մ. Մկրյանը[14], Ս. Հարությունյանը[15],

---

[1] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց Հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1870:

[2] Տե՛ս **Ա. Տևկանց**, Հայերգ, մեղեդիք, տաղք և երգք, Թիֆլիս, 1882:

[3] Տե՛ս **Գ. Լեւոնեան**, Հայ աշուղներ, Ալէքսանդրապոլ, 1892, էջ 90:

[4] Տե՛ս **Կ. Կոստանեանց**, Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանաւորներ, պրակ Ա և Բ, Թիֆլիս, 1892:

[5] Տե՛ս **Տ. Պալեան**, Անյիշատակ հայ աշուղ մը, Հանդէս ամսօրեայ, 1897, էջ 344-345:

[6] Տե՛ս **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Բ, Ե., 1967:

[7] Տե՛ս **Յովի. Թադեւոսեան**, Քուչակ Նահապետի երգերը, Թիֆլիս, 1903:

[8] Տե՛ս **Ա. Չօպանեան**, Նահապետ Քուչակի դիւանը, Փարիզ, 1902, **Ա. Չօպանեան**, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940:

[9] Տե՛ս **Հ. Աճեմեան**, Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան, Էջմիածին, 1917, էջ 91-96:

[10] Տե՛ս Ֆրիկ, Դիւան, աշխատասիրութեամբ **Տիրայր Արքեպիսկոպոսի**, Նիւ-Եորք, 1952, էջք 138, 551-558:

[11] Տե՛ս **Աս. Մնացականյան**, Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1958, թիվ 2, էջ 234-257, **Աս. Մնացականյան**, Միջնադարյան սիրո հայրենների անդրանիկ ժողովածուն և հայրենների հարցը, Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Ե., 1971, էջ 96-126, Հայ ժողովրդի պատմություն, հտ. 4, Ե., 1972, էջ 529-530, Հայրեններ, աշխ. **Աս. Մնացականյանի**, Ե., 1995, էջ 8-40:

[12] Տե՛ս **Օ. Եգանյան**, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, Բանբեր Մատենադարանի, 1960, թիվ 5:

[13] Տե՛ս **Շ. Գրիգորյան**, Հայ հին գուսանական երգերը, Ե., 1971, **Շ. Գրիգորյան**, Ո՞վ է, ի վերջո, Նահապետ Քուչակը, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1984, № 7, **Շ. Գրիգորեան**, Ո՞վ է իրականում Նահապետ Քուչակը, Բազմավէպ, 2000, ՃԾԸ 1-4, էջ 231-246, **Շ. Գրիգորյան**, Հայ աշուղական գրականության պատմություն, Ե., 2002, էջ 76-102:

[14] Տե՛ս **Մ. Մկրյան**, Նահապետ Քուչակ, տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Ե., 1976, էջ 464-476:

[15] Տե՛ս **Ս. Հարությունյան**, Նահապետ Քուչակ, Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 8, Ե., 1982, էջ 172-173, **Ս. Հարությունյան**, Հայրենների խնդիրը

Հ. Սահակյանը[16], Կ. Քիպարյանը[17], Խ. Ամիրյանը[18], Հ. Բախչինյանը[19], Պ. Խաչատրյանը[20], Հ. Թամրազյանը[21], Վ. Եղիազարյանը[22] և այլք, անդրադարձ է եղել նաև թյուրքալեզու գրականության մեջ[23]:

Քուչակի անունն առաջինը վկայում է Ղ. Ալիշանը. 16-րդ դարի երգիչների շարքում նա պարզապես հիշատակել է **Քուչաք Հառկուանցի** անունը[24], որը **Քուչակ Հասկըուանցի** ձևով կրկնել է Գարեգին Լևոնյանը[25]:

Ա. Տևկանցը 1882 թ. «Հայերգ»-ում ի թիվս այլ երգիչների հիշատակում է նաև «Նահապետ Վարպետ (Մականուն Քուչակ) Խառակոնսցի»[26], ապա տարբերակում պապ և թոռ Քուչակներին:

և Ասատուր Մնացականյանի գիտական նոր համահավաքը, Պատմա-բանասիրական հանդես, 1996, թիվ 1-2, էջ 153-168:

[16] Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխ. **Հ. Սահակյանի**, հտ. Ա, Ե., 1986:

[17] Տե՛ս **Կ. Քիպարեան**, Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, 1992, էջ 630-632:

[18] Տե՛ս **Խ. Ամիրեան**, Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանեան Կայսրութիւն. 16-20րդ դարեր, Փարիզ, 1993:

[19] Տե՛ս **Հ. Բախչինյան, Ս. Սարինյան**, Հայ գրականություն, դասագիրք 9-րդ դասարանի համար, Ե., 1993, էջ 136:

[20] Տե՛ս Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. **Պ. Խաչատրյանի**, Ե., 2000:

[21] Տե՛ս Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխ. **Հ. Թամրազյանի**, Ե., 2001:

[22] Տե՛ս **Վ. Եղիազարյան**, Հայրեններ, Վանաձոր, 2007, **Վ. Եղիազարյան**, Քուչակյան թյուրիմացությո՞ւն, թե՞ անիմացություն, Գրական թերթ, 2008, 25 հունվարի, **Վ. Եղիազարյան**, Նահապետ Քուչակը և նրա անունով մեզ հասած երգերը, Գրականագիտական հանդես, 2016:

[23] Տե՛ս **Ա. Երևանլի**, Հայ-ադրբեջանական ժողովրդական բանահյուսության կապերը, Эрмэни-азэрбайчан шифаһи халг эдэбийяты элагэлэри, Երևան, 1958, էջ 177, **Vasfi Mahir Kocatürk**, Saz Şiiri Antolojisi, Ayyıldız, Mtb. Ank. 1963, s. 21, **Əzizə Cəfərzadə**, Azərbaycanın aşıq və şair qadınları, Bakü, 1974, էջ 152-156, **Իսրաֆիլ Ապպասով**, Ազէրպայճան Ֆոլկլորու XIX Էսր Էրմէնի Մէնպալէրինտէ, Բաքու, 1977, էջ 23-32, **K. Pamukciyan**, Ermeni Harfli Türkçe Metinler, Aras yay. Ist., s. 107, **Mehmet Bayrak**, Alevi-Bektasi Edebiyatında Ermeni Aşıkları (Aşuğlar), Ankara, 2005, **Azad Nəbiyev**, Azərbaycan xalq ədəbiyyatı, II hissə, Bakı, 2006, էջ 93-101 /http://elibrary.bsu.az/kis/1615.pdf, հասանելի էր 24.02.2017/, նաև Azərbaycan dastanları (toplayib nəşrə hazirlayan A. Nəbiyev-dir), Bakı, 1977, էջ 119-129:

[24] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց Հայոց, հտ. Բ, էջ 125:

[25] Տե՛ս **Գ. Լեւոնեան**, Հայ աշուղներ, Ալէքսանդրապոլ, 1892, էջ 90:

[26] Տե՛ս Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 139:

«Այս ծովական գիշերն ի բուն» հայրենների շարքը նա սխալմամբ համարում է Նահապետ վարպետ Քուչակի գործը, իսկ «Գիւզել մի ես ի յԱնկիւրիէ տեսի» երգը՝ թոռ Քուչակի[27]:

Կ. Կոստանյանցը 1892 թ. գրում է. «1583-ին օրինակուած երգի հեղինակ համարւում է Վասպուրականի Խառակոնիս գիւղացի աշուղ Նահապետը, որի մականունն է Քուչակ: 1637-ին սորա թոռը, որ նոյնպէս կոչուել է Քուչակ, մի յիշատակարանի մէջ ասում է, որ Նահապետը իւր «մեծ պապն է»»[28]:

Տ. Պալյանը 1897 թ. տպագրում է աշուղ Քուչակի «Տաղ սուրբ Աստվածածնին» վերնագրով հայերեն երգը[29]:

Մ. Աբեղյանը 1898-1900 թթ.՝ Գևորգյան ճեմարանում դասախոսելու տարիներին, իր ուսանող Հովի. Թադևոսյանին հանձնարարում է գրել Քուչակի մասին, իսկ ավելի ուշ իր ուսումնասիրության մեջ խոսում է աշուղ Նահապետի և թոռ Քուչակի մասին[30]:

Ա. Չոպանյանը 1902 թ. գրում է. «Ամէն պարագայի մէջ, սա ստոյգ է, որ ԺՋ դարուն սկիզբը կամ ԺԵին վերջերը, Վանայ Խարակոնիս գիւղին մէջ ապրած է աշուղ մը, Նահապետ Քուչակ անունով, որ իր երգերուն քաղցրութեամբը արտակարգ համբաւի մը տիրացած է»[31]: Ա. Չոպանյանը ընդունում է նաև թոռ Քուչակի գոյությունը՝ Ա. Տևկանցի նման նրա միակ երգը համարելով «Գիւզել մի ես երեկ տեսայ ի քաղաքն ի յԱնքուրեայ»-ն[32]: Ավելի ուշ՝ 1926 թ., «Հատընտիր էջեր քուչակեան տաղաշարքէն» գրքի առաջաբանում Ա. Չոպանյանը գրում է, որ անհնար է՝ հայրենների հեղինակը լինի Քուչակը, ապա շարունակում է. «Այդ Վանցի Քուչակի մէկ բանաստեղծութիւնը (Աստուածածնայ վրայ տաղ մը) ատենով Ս. Ղազարու ձեռագիրներուն մէջ գտած ու հրատարակած եմ **Անահիտի** մէջ»[33]: Իսկապես, Քուչակի այս երգը Տ. Պալյանի հատվածաբար

---

[27] Տե՛ս անդ, էջ 140:

[28] Տե՛ս անդ, էջ 143:

[29] Տե՛ս **Տ. Պալեան**, Անյիշատակ հայ աշուղ մը, Հանդէս ամսօրեայ, 1897, էջ 344-345:

[30] Տե՛ս **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Բ, էջ 18:

[31] **Ա. Չօպանեան**, Նահապետ Քուչակի դիւանը, Փարիզ, 1902, էջ 15:

[32] Տե՛ս անդ:

[33] **Ա. Չօպանեան**, Հատընտիր էջեր քուչակեան տաղաշարքէն, Փարիզ, 1926, էջ 6:

տպագրությունից հետո «Լումայ»-ում տպագրել է Հովի. Թադևոսյանը[34], ապա «Անահիտ» հանդեսում՝ Ա. Չոպանյանը[35]: Իսկ 1940 թ. Ա. Չոպանյանը «Հայրեններու բուրաստան»-ում գրում է, որ Քուչակ անունով այլ երգիչներ են եղել Վանում, որոնց չի կարելի շփոթել հայրենների հեղինակի հետ, ապա շարունակում է, որ դրանցից մեկը «գրաբարախառն ռամկահայերէնով գրող տաղասացն է, որ շարադրած է «Ս. Աստուածածնի Գովք»ը, որուն երկու փոփոխակներ հրատարակուած են իմ եւ Թադէոսեանի կողմէ»[36]:

Հովի. Թադևոսյանը 1902 թ. նախ «Լումայ»-ում, ապա «Քուչակ Նահապետի երգերը» գրքում ընդունում է պապ ու թոռ Քուչակների գոյությունը, տպագրում Աստվածածնին նվիրված գովքը՝ այն վերագրելով թոռ Քուչակին՝ վերջինիս էլ համարելով 100 տարի ապրող, ոչ թե Նահապետին[37]:

Քուչակին անդրադառնում է նաև Մ. Աբեղյանը՝ տպագրելով իր ուսումնասիրությունը «ՀՍԽՀ պետական համալսարանի գիտական տեղեկագրի» 1927-1930 թթ. համարներում: Մ. Աբեղյանն իրավամբ հայրենները Քուչակի երգերը չի համարում և վկայակոչում է նրա Աստվածածնի երգը, որին ծանոթ է Էջմիածնի մատենադարանի երկու ձեռագրերից: Պապ ու թոռ Քուչակների հարցը ևս դարձել է Մ. Աբեղյանի ուսումնասիրության առարկան, ինչի մասին գրել է. «Այդ «մեծ պապ» Աշուղ Քուչակը 1637 թ. հիշատակարան գրող կամ գրել տվող իր թոռից չորս սերնդի տարիքով ավելի մեծ պիտի լինի, ուրեմն ծնված պիտի լինի 1637 թվից մոտավորապես 120-140 տարի առաջ (յուրաքանչյուր սերնդին հաշվելով միջին թվով 30-35 տարի), 15-րդ դարի վերջերում կամ 16-րդի առաջին տասնամյակներում: Եվ որովհետև, ինչպես կտեսնենք, իր ասելով՝ նա խորին ծերության է հասել, նույնիսկ 100 տարին լրացրել, ուրեմն ապրել է մինչև 16-րդ դարի վերջերը»[38]:

---

[34] Տե՛ս Լումայ, 1902, թիվ 5, էջ 166-169:

[35] Տե՛ս Անահիտ, 1907, թիվ 6-7, էջ 130-131:

[36] **Ա. Չոպանեան**, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 92:

[37] Այս մասին մանրամասն տե՛ս **Յովի. Թադեւոսեան**, Քուչակ Նահապետի երգերը, Թիֆլիս, 1903:

[38] **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Բ, էջ 18:

Ավելի վաղ՝ 1917 թ., Հ. Աճեմյանը «Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան» գրքում գրում է, որ աշուղ Հակոբից 1914 թ. գրի է առել նրա վարպետ աշուղ Տալիպից լսած աշուղ Չիչակի սիրային փոքրիկ երգերը, որոնց մեջ կան որոշ թուրքերեն բառեր: Հարկ է նշել, որ Հ. Աճեմյանի տպագրած այս երգերում չկա Քուչակի անունը, սակայն 1917 թ. նա խառակոնիսցի աշուղ վարպետ Ղազարից գրի է առել «Դարդլի բիւլբիւլ» և «Բենդի Մահու» թուրքերեն երգերը, որոնց վերջում հիշատակվում է Քուչակի անունը:

Քուչակի առեղծվածի լուծման հարցում չափազանց կարևոր գործ է կատարել Օ. Եգանյանը՝ «Բանբեր Մատենադարանի» հանդեսում տպագրելով աշուղի՝ մեզ հասած թուրքերեն 7 երգերը[39], հիշատակելով, որ նրանն են նաև երկու հայերեն երգեր, որոնք, սակայն, չի հրապարակել:

Քուչակի և հայրենների խնդրի լավագույն գիտակներից մեկը՝ Աս. Մնացականյանը, 1958 թ. գրում է. «XVI դարում, իրոք, եղել է վանեցի (Խառակոնիս գյուղացի) մի աշուղ՝ Նահապետ Քուչակ անունով: Նրա մի շարք ստեղծագործությունները, որոնցից ոչ մեկը հայրեն չէ, պահպանվել են ձեռագրերում և բոլորն էլ կրում են նրա անունն ու մականունը»[40]:

Այնուհետև 1971 թ. Շ. Գրիգորյանը Քուչակի այդ երգերի մասին գրում է. «Քուչակի այս հայերեն և թուրքերեն երգերը, ասացինք, հորինված են աշուղական տաղաչափությամբ, աշուղական գեղագիտության նորմերով, որով ոչ մի կասկած չի մնում, որ Նահապետ Քուչակը ոչ թե իր անունով մեզ հասած հայրենների, այլ հենց այդ աշուղական երգերի հեղինակն է»[41]:

---

[39] Տե՛ս **Օ. Եգանյան**, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, Բանբեր Մատենադարանի, 1960, թիվ 5:

[40] **Աս. Մնացականյան**, Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1958, թիվ 2, էջ 249:

[41] **Շ. Գրիգորյան**, Հայոց հին գուսանական երգերը, էջ 230:

1984 թ. Շ. Գրիգորյանը հանդես է գալիս «Ո՞վ է, ի վերջո, Նահապետ Քուչակը» հոդվածով[42], ուր գրում է. «Քուչակն, ուրեմն, ոչ թե տաղերգու, տաղասաց կամ բանաստեղծ է, այլ՝ աշուղ: Այս է 1617 թ. եկեղեցուն պահ տված հիշատակարանի բովանդակությունը: Մնացածը, ինչ որ ասվում կամ վերագրվում է Նահապետ Քուչակին, հետագա հավելումներ են»[43]: Շ. Գրիգորյանը նաև թոռ Քուչակի մասին է գրում. «Հիշատակարանից երևում է, որ այս կրտսեր Քուչակն ապրել է XVII դարում, համենայն դեպս 1617 թ. է գրված նրա վերաբերյալ Ջուղայեցու հիշատակարանը: Ուշագրավ է, որ սրա աշուղ լինելն էլ Ջուղայեցուց չէ, որ իմանում ենք: Տևականցն է նրան աշուղ համարում: Իսկ իրականում նա ոչ թե աշուղ, այլ, թերևս, տաղասաց է: Նահապետին վերագրվող հայերեն երկու երգերն էլ մեր կարծիքով սրանն են»[44]: Շ. Գրիգորյանը թոռ Քուչակի երգը չի համարում «Գիւզել մի ես երեկ տեսայ ի քաղաքն ի յԱնքուրեայ»-ն[45], որն Ա. Տևականցը համարել է թոռ Քուչակի տաղը:

Իսկ Նահապետի մասին Շ. Գրիգորյանը գրում է. «Նահապետ Քուչակն, իրոք, նշանավոր աշուղ է եղել և ստեղծել է իր ապրած դարին համապատասխան բարձրարժեք աշուղական երգեր, միայն թե՝ իր ժամանակին ընդունված ու սովորույթ դարձած թուրքերեն լեզվով»[46]: «Այդ երգերը տաղաչափված են աշուղական արվեստի վերին նորմերով և նյութի գերազանց իմացությամբ: Երևում է, որ Քուչակն իր ժամանակի կրթված, բազմակողմանիորեն զարգացած մարդկանցից մեկն է եղել: Իմացել է արևելքի երեք նշանավոր լեզուներն էլ, մինչև վերջին թելը յուրացրել է Ղուրանն ու Աստվածաշունչը, ուսումնասիրել է հարևան ժողովուրդների պատմությունն ու մշակույթը, դիցաբանությունն ու ֆոլկլորը: Դժվար չէ այդ բանում համոզվել՝ ծանոթանալով Քուչակի անվամբ մեզ հասած այն մի քանի երգերի հետ, որ գրի են առել Եղիա

---

[42] Տե՛ս **Շ. Գրիգորյան**, Ո՞վ է, ի վերջո, Նահապետ Քուչակը, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1984, էջ 34-42:

[43] Անդ, էջ 36:

[44] Անդ, էջ 37:

[45] Տե՛ս անդ:

[46] Անդ, էջ 40:

(Կարնեցի) Մուշեղյան-Աստվածատրյանցը 1721-1724 թթ. Թավրիզում և անանուն այլ գրիչներ՝ Վասպուրականում և այլուր»,– գրում է Շ. Գրիգորյանը[47], ապա ծանոթագրության մեջ ավելացնում, որ «Քուչակին վերագրված տիպիկ երկու այլ թուրքերեն երգեր էլ («Դարդլի բիւլբիւլ» և «Բենդի-Մահու») 1917 թ. Աշտարակում, խառակոնիսցի վարպետ Ղազարից գրառել է վասպուրականցի բանասեր Հ. Աճեմյանը (տե՛ս Հ. Աճեմյան, Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության, Էջմիածին, 1917, էջ 94-95)»[48]:

Շ. Գրիգորյանի եզրակացությունն այն է, որ «Նահապետը թուրքերեն և միայն թուրքերեն խաղերի հեղինակ է, ապա թոռը կամ ծոռը՝ հայերեն»[49]՝ այդպիսով հայերեն պահպանված 2 երգը համարելով թոռ Քուչակինը, իսկ թոռ Քուչակին՝ տաղասաց, ոչ թե աշուղ՝ զանց առնելով ոչ միայն հիշյալ հայերեն երգերի՝ աշուղական տաղաչափության կանոններով ստեղծված լինելու հանգամանքը, այլ նաև մյուս հայերեն երգերի, որոնց մասին Շ. Գրիգորյանը, ինչպես երևում է, տեղյակ չի եղել:

Երկու տարի անց՝ 1986 թ., Հ. Սահակյանը ձեռագիր և տպագիր աղբյուրների համեմատական քննությամբ կազմում է Աստվածածնին նվիրված երգի գիտաքննական բնագիրը, ապա առաջին անգամ տպագրում աշուղ Քուչակի հայերեն երկրորդ երգը՝ երկուսն էլ Քուչակ Վանեցու անունով, իսկ ծանոթագրության մեջ հրապարակում է նաև **Սանամոր և քավորի** երգը, սակայն կարծիք է հայտնում, որ դա Քուչակ Վանեցու երգը չէ[50], որը Մ. Աբեղյանը[51], Աս. Մնացականյանը[52] իրավացիորեն համարել են Քուչակի երգը:

---

[47] Անդ:

[48] Անդ:

[49] **Շ. Գրիգորյան**, Ո՞վ է, ի վերջո, Նահապետ Քուչակը, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1984, էջ 41:

[50] Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխ. **Հ. Սահակյանի**, հտ. Ա, էջ 588:

[51] Տե՛ս **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Բ, էջ 19-20:

[52] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. 4, Ե., 1972, էջ 529:

Խ. Ամիրյանը 1993 թ. Փարիզում տպագրում է «Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանեան Կայսրութիւն. 16-20-րդ դարեր» գիրքը, որտեղ գրում է. «Իսկ առաջին հայ աշուղը, որը ներկայանում է «աշըխ» անուանումով, համարւում է վանեցի Քուչակը, որն ապրել է 16-րդ դարի սկզբներին»[53]: Ապա Խ. Ամիրյանը թյուրքալեզու աշուղների կենսագրականներում գրում է. «Տարբեր հայերէն ձեռագրերում աշուղ Չիչակ, աշուղ Քուչակ, աշըղ Քէօչէկ, աշըղ Քուչէկ, նուաստ Քօչակ, Վանլի Քուչակ, Վանլի Քօչակ, Վանլի Քիւչար եւ թուրքերէն երգերում Քոչակ, Վանլի Քուչակ, Վանլի Ղօլքէօչակ, Վանլի Քօչակ, Վանլի Քեօչակ եւ Վանլի Քէօչէք անուններով ծանօթ աշուղը, համարեայ բոլոր հետազօտողների կողմից, համարւում է Վանի շրջակայ Խառակոնիս գիւղում ապրած եւ գիւղի ս. Թորոս (Թէոդորոս) եկեղեցու գերեզմանատանը թաղուած Նահապետ Քուչակը, որն ապրել է հարիւր տարուց աւելի եւ մահացել 1592 թ.»[54]:

Պ. Խաչատրյանը 2000 թ. իր կազմած ժողովածուի մեջ հատվածաբար տպագրում է Քուչակ Վանեցու՝ Աստվածածնին նվիրված գովքը՝ ծանոթագրության մեջ գրելով. «Նա գրաբարի համն առած մարդ է երևում, անշուշտ դպրանոց է հաճախել, գեթ թերի ուսում ստացել, թեպետ չգիտենք, թե որտե՛ղ է սովորել:

Աշուղի կոչումը նրան ստիպել է գնալ տեղից տեղ, մշտապես թափառել: Երևում է, որ իր երգով ծառայել է ոչ միայն հայ շրջաններին, այլև թյուրքախոս հայությանը և թուրք բնակչությանը: Ըստ երևույթին ավելի շատ հորինել է թուրքերեն, քան թե հայերեն: Ամբողջապես հայերենով գրված «Գովանք Աստուածածնին» բանաստեղծությունը ոչ թե միջին հայերենով է, այլ ավելի գրաբարով (իհարկե, գրաբարի ոչ այնքան կատարյալ արտահայտությամբ): Այդ հանգամանքը հատկապես ուզում ենք ընդգծել, որովհետև Արիստակես Տևկանցից սկսած բանասիրության մեջ չարդարացված միտում է եղել միջնադարյան հայրենների ողջ հարստությունը վերագրելու աշուղ Քուչակ Վանեցուն՝ նրան տալով Նահապետ Քուչակ նորժամանակյա

---

[53] **Խ. Ամիրեան**, Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանեան Կայսրութիւն. 16-20-րդ դարեր, էջ 18:

[54] Անդ, էջ 181:

անվանումը: Եթե ամեն ինչ անտեսենք և համակերպվենք այդ բուռն ցանկությանը, ապա դրա դեմ կխոսի հայրենների դասական միջին հայերենը՝ ապացուցելով արհեստականորեն ձևավորված տեսակետի անհիմն լինելը»[55]:

Քուչակագիտության համար կարևոր ներդրում է Շ. Գրիգորյանի «Հայ աշուղական գրականության պատմություն» գրքում Քուչակին նվիրված բաժինը[56], որի մի մասը մինչ այդ տպագրվել է նաև «Բազմավէպ»-ում[57]:

Շ. Գրիգորյանն առաջին հայ աշուղ է համարում 15-րդ դարի աշուղ Ղուլօղլի Երզնկացուն՝ հետևելով Աս. Մնացականյանին[58], ինչն ընդունել է նաև Խ. Ամիրյանը[59]: «Կռունկ»-ի՝ Խ. Ամիրյանի տպագրած տարբերակն ակնհայտ աշուղական տաղաչափություն ունի. այն 6+5 հատածով երգ է, որի առաջին տան 2-րդ և 4-րդ տողերը վերջանում են նույն բառով, որը կրկնվում է բոլոր հաջորդ տների 4-րդ տողի վերջում, որին նախորդող բառերն ունեն ներքին հանգ, իսկ 2-րդ տնից սկսած՝ բոլոր տների 1-ին, 2-րդ և 3-րդ տողերն ավարտվում են նույն հանգով: Խ. Ամիրյանն ու Շ. Նազարյանն այն անվանել են 6+5 հատածով ղոշմա[60]: Վկայակոչելով Շ. Նազարյանի ««Կռունկ» երգը և նրա պատմությունը» գիրքը[61]՝ Շ. Գրիգորյանը գրում է. «Մենագրության հեղինակը իրավացիորեն չի բաժանում Հովի. Երզնկացուն, Մկրտիչ Նաղաշին և Նահապետ Քուչակին «Կռունկի» հեղինակ համարելու վերաբերյալ Ք. Քուշնարյանի, Ս. Քամալյանի, Հր. Աճառյանի, Կ. Կոստանյանի և Վր. Փափազյանի հայտնած կարծիքները և գտնում է, որ այն տակավին անհայտ մի

---

[55] Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. **Պ. Խաչատրյանի**, էջ 927:

[56] **Շ. Գրիգորյան**, Հայ աշուղական գրականության պատմություն, էջ 76-102:

[57] **Շ. Գրիգորեան**, Ո՞վ է իրականում Նահապետ Քուչակը, Բազմավէպ, 2000, ՃԾԸ 1-4, էջ 231-246:

[58] Տե՛ս **Աս. Մնացականյան**, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956, էջ 557:

[59] Տե՛ս **Խ. Ամիրեան**, Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանեան Կայսրութիւն. 16-20-րդ դարեր, էջ 142-147:

[60] Տե՛ս անդ, էջ 142:

[61] Տե՛ս **Շ. Նազարյան**, «Կռունկ» երգը և նրա պատմությունը, Ե., 1977:

հեղինակի ստեղծագործություն է և ոչ թե ժողովրդական երգ»[62]: Մեզ համար ընդունելի է այն դիտարկումը, թե «Կռունկ» երգը Ղուլօղլու աշուղական երգն է, սակայն կարծում ենք, որ այդ երգը հետագայում դարձել է նաև հայկական-ժողովրդական երգ: Շ. Գրիգորյանը ոչ համոզիչ մի փաստարկի հիման վրա Ղուլօղլի Երզնկացուն համարում է 15-րդ դարի երգիչ, և նրա այդ տեսակետը փորձում է լեզվական տեսանկյունից հիմնավորել նաև Խ. Ամիրյանը. «Ղուլօղլու Երզնկացու լեզուն, բնագրում, համեմատաբար անվթար պահպանուած լինելու հանգամանքով, իրօք համապատասխանում է 14-15-րդ դարերի անատօլիական-օղուզական թուրքերէնին, որին, որոշ թուրք, ռուս եւ այլազգի լեզուաբաններ «չաղաթայերէն» են անուանում»[63]: Մենք համոզիչ չենք համարում Ղուլօղլի Երզնկացուն 15-րդ դարի երգիչ համարելու Շ. Գրիգորյանի և Խ. Ամիրյանի փաստարկները, որ առանց ձեռագրական կամ կենսագրական կոնկրետ փաստի փորձում են լուծել այսքան սկզբունքային մի խնդիր, որը խոցելի է նաև մեթոդաբանական առումով: Ուստի անընդունելի ենք համարում Ղուլօղլի Երզնկացուն 15-րդ դարի հայազգի առաջին աշուղ համարելու վարկածը, թեև ընդունում ենք, որ վերջինս իսկապես աշուղ է, սակայն պետք է պարզել նրա ապրած ժամանակը, ինչն այստեղ դուրս է մեր խնդրից[64]:

Մեզ համար կարևոր է այն, որ թուրքերեն «Կռունկ» երգի հեղինակը Ղուլօղլի Երզնկացին է, որ ձեռագրական ստույգ փաստով հիմնավորել են Շ. Գրիգորյանը և Խ. Ամիրյանը, իսկ հայերեն «Կռունկ» երգը առանց որևէ հիմքի Խրիմյան Հայրիկը վերագրել է Քուչակին[65], սակայն այն «ցարդ մնում է առեղծվածային և անհեղինակ, բայց ոչ երբեք ժողովրդական»[66], ուստի այն դուրս ենք թողնում Քուչակի երգերի ժողովածուից:

---

[62] **Շ. Գրիգորյան**, Հայ աշուղական գրականության պատմություն, էջ 76:

[63] **Խ. Ամիրեան**, Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանեան Կայսրութիւն. 16-20-րդ դարեր, էջ 143:

[64] Ղուլօղլի Երզնկացի աշուղին և նրա ստեղծագործությանը կանդրադառնանք առանձին հոդվածով:

[65] Տե՛ս «Արձագանք», 1893, 1 սեպտեմբերի, թիվ 101:

[66] Հայ միջնադարյան պանդխտության տաղեր, XV-XVIII դդ., աշխ. **Մանիկ Մկրտչյանի**, Երևան 1979, էջ 168-169:

Այս գրքում ևս Շ. Գրիգորյանը պնդում է նախկինում իր հայտնած կարծիքը՝ ավելի հիմնավորելով այն տեսակետը, թե հայրենները կապ չունեն Քուչակի հետ. վերջինս մի աշուղ է, նաև թուրքերեն երգերի հեղինակ, որի «աշուղական հայատառ թուրքերեն երգերը, հիրավի բարձրարվեստ գործեր են՝ Սայաթ-Նովայի, Բեսիկիի, Վագիֆի, Սաիբ և Կովսի Թավրիզեցիների, Վիդադիի, Սալմաստեցի Ղուլ-Հարությունի, Դալլաք-Մուրադի, Շիրինի, Դավիթ Քեշիշ-օղլու ստեղծագործություններին համահավասար: Հենց այն բանը, որ այդ երգերը գրի են առնվել ու պահպանվել Թավրիզում, Հայաստանի հեռավոր շրջաններում, Թիֆլիսում և այլուր, խոսում է Քուչակի ունեցած մեծ համբավի, ճանաչված լինելու մասին»[67]: Շ. Գրիգորյանը հստակորեն արտահայտում է իր մոտեցումը, թե «հայրենները հայրենական են, աշուղականը՝ օտարամուծ, հայրենները միայն մերն են, աշուղականը՝ նաև մերը»[68]: Ավելին՝ աշուղական երգերը և հայրենները «ժանրային առումով միանգամայն տարբեր և այլասեռ ստեղծագործություններ» են, որոնք ոչ միայն չի կարելի նույնացնել, այլև անգամ շփոթել[69]:

Նկատենք, որ նույնիսկ այն բանից հետո, երբ Հ. Աճեմյանը, ապա Օ. Եգանյանը հրատարակում են աշուղ Քուչակ Վանեցու թուրքերեն աշուղական երգերը, դրանք մեզանում հանիրավի անտեսվում են, և ցայժմ էլ փորձում են մեր հին գուսանաժողովրդական հայրենները կապել Քուչակի անվան հետ:

Այդ թյուրիմացությանը նպաստել են նաև Արշակ Չոպանյանը[70], Ավետիք Ղուկասյանը[71], Մկրտիչ Մկրյանը[72], Հրանտ Թամրազյանը[73] և այլք:

---

[67] **Շ. Գրիգորյան**, Հայ աշուղական գրականության պատմություն, էջ 89:

[68] Անդ, էջ 90:

[69] Տե՛ս անդ, էջ 91:

[70] Տե՛ս **Ա. Չօպանեան**, Նահապետ Քուչակի դիւանը, Փարիզ, 1902:

[71] Տե՛ս Նահապետ Քուչակ, Հայրենի կարգավ, Ե., 1957, էջ 3-35:

[72] Տե՛ս **Մ. Մկրյան**, Նահապետ Քուչակ, Հայ մշակույթի նշանավոր գործիչները, V-XVIII դարեր, Ե., 1976, էջ 464-476:

[73] Տե՛ս Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխ. **Հ. Թամրազյանի**, Ե., 2001:

Թեև հայ անվանի բանաստեղծ և միջնադարագետ Պարույր Սևակը դեռևս 1963 թվականին գրել է, որ հայրենները «Քուչակին վերագրելն արդյունք է թյուրիմացության, իսկ այժմ և այսուհետ առնվազն անիմացության»[74], սակայն մինչև այժմ էլ որոշ գրականագետներ փորձում են անհիմն կերպով մեր հին գուսանաժողովրդական հայրենները կապել Քուչակի անվան հետ, անգամ դպրոցական ու բուհական դասագրքերում, նաև գիտական որոշ ուսումնասիրություններում շարունակում են պնդել այդ տեսակետը՝ հանիրավի անտեսելով Քուչակ Վանեցու հայերեն և թուրքերեն աշուղական երգերը:

Ավելին՝ ոչ միայն հայերեն, այլև աշխարհի տարբեր լեզուներով տարածվել են հայրենները՝ որպես Նահապետ Քուչակի ստեղծագործություններ[75], մինչդեռ դրանք իրականում հայ հին ժողովրդական, գուսանաժողովրդական երգեր են, մի մասը՝ նաև միջնադարյան հեղինակային-անհատական երգեր:

Որքան էլ հայագիտության մեջ թյուրիմացությունը շարունակվել և խորացել է, միևնույնն է, սկզբից ևեթ ողջամիտ բանասերները

---

[74] **Պարույր Սևակ**, Սայաթ-Նովա, Ե., 1987, էջ 110:

[75] Տե՛ս **ֆրանսերեն՝ Tchobanian A.**, La roseraie d›Armenie, t. 2, Paris, 1923, նաև Cent poèmes d'amour d'exil /par Nahapet Khutchak; Trad. par Vahé Godel. Paris: Orphee; La difference, 1991. 125 p., նաև **ռումիներեն՝** Nahapet Kuceac, Cântece - ANI – Anuarul culturii armene, Bucureşti, 1941, pag. 256. Traducere de Mircea Gheorghiu şi Gr. Avakian, նաև **անգլերեն՝** Blackwell, Alice Stone. Armenian Poems, Rendered into English Verse. Boston, MA: Atlantic Printing Company, 1917, նաև Come Sit Beside Me and Listen to Kouchag: Medieval Poems of Nahabed Kouchag. Translated by Diana Der Hovanessian. Ashod Press, 1984, 85 p., նաև A hundred and one hayrens /Nahapet Kouchak; Introd. by W. Saroyan; English transl. by E. Osers. Yerevan: Nairi, 1998. 127 p. A handred and one hayrens =Հարյուր ու մեկ հայրեն /Nahapet Kouchak; Design by G. Marikian. Yerevan : Nairi, 2012. 108 p., նաև **բուլղարերեն՝** Нахабед Кучак: Синя птица, златно перо: стихотворения.- Пловдив: Изд. Хоризонти, 2009.- 128 с. Подбрал и превел превод Марко Марков, նաև Нахабед Кучак: Целувката, която ти дари ми...- София Пловдив: Парекордзаган, 2011.- 63 с. Превод от арменска език Агоп Мелконян, նաև **ռուսերեն՝** Песни любви, пер. А. Амбарцумяна, СПБ, 1904, նաև Наапет Кучак. Стихотворения, пер. Ал. Степана, предисл. М. Мкряна, Ер., 1941, նաև Сто и один айрен, предисл., составл., подстроч. пер. Л. Мкртчяна, Ер., 1976, նաև **գերմաներեն՝** Hundertundein Hairen /Von Nahapet Khutschak. Jerewan: Nairi, 1999. 106 S. Hundertundein hairen =Հարյուր ու մեկ հայրեն /Nahapet Khutschak; Umschlaggestaltung von G. Marikian. Jerewan: "Nairi", 2012. 105 S. և այլն:

հաշվի են նստել ձեռագրական փաստերի հետ: Քուչակին որպես ոչ թե հայրենների հեղինակ, այլ որպես աշուղ ընդունել են Տ. Պալյանը[76], Մ. Աբեղյանը[77], Աս. Մնացականյանը[78], Օ. Եգանյանը[79], Հ. Սահակյանը[80], Ս. Հարությունյանը[81], Շ. Գրիգորյանը[82], Խ. Ամիրյանը[83], Պ. Խաչատրյանը[84], Վ. Եղիազարյանը[85] և այլք: Քուչակին աշուղ են համարում նաև թյուրքալեզու գրականության մեջ[86]:

---

[76] Տե՛ս **Տ. Պալեան**, Անյիշատակ հայ աշուղ մը, Հանդէս ամսօրեայ, 1897, էջ 344-345:

[77] Տե՛ս **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Բ, Ե., 1967:

[78] Տե՛ս **Աս. Մնացականյան**, Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1958, թիվ 2, էջ 234-257, **Աս. Մնացականյան**, Միջնադարյան սիրո հայրենների անդրանիկ ժողովածուն և հայրենների հարցը, տե՛ս Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Ե., 1971, էջ 96-126, Հայրեններ, աշխ. **Աս. Մնացականյանի**, Ե., 1995, էջ 8-40:

[79] Տե՛ս **Օ. Եգանյան**, Նահապետ Քուչակի հայատառ թուրքերեն տաղերը, Բանբեր Մատենադարանի, 1960, թիվ 5:

[80] Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխ. **Հ. Սահակյանի**, հտ. Ա, Ե., 1986:

[81] Տե՛ս **Ս. Հարությունյան**, Նահապետ Քուչակ, Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 8, Ե., 1982, էջ 172-173, **Ս. Հարությունյան**, Հայրենների խնդիրը և Աատուր Մնացականյանի գիտական նոր համահավաքը, Պատմա-բանասիրական հանդես, 1996, թիվ 1-2, էջ 153-168:

[82] Տե՛ս **Շ. Գրիգորյան**, Հայ հին գուսանական երգեր, Ե., 1971, **Շ. Գրիգորյան**, Ո՞վ է, ի վերջո, Նահապետ Քուչակը, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1984, № 7, **Շ. Գրիգորեան**, Ո՞վ է իրականում Նահապետ Քուչակը, Բազմավէպ, 2000, ՃԾԸ 1-4, էջ 231-246, **Շ. Գրիգորյան**, Հայ աշուղական գրականության պատմություն, Ե., 2002, էջ 76-102:

[83] Տե՛ս **Խ. Ամիրեան**, Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանեան Կայսրութիւն. 16-20-րդ դարեր, Փարիզ, 1993:

[84] Տե՛ս Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. **Պ. Խաչատրյանի**, Ե., 2000:

[85] Տե՛ս **Վ. Եղիազարյան**, Հայրեններ, Վանաձոր, 2007, **Վ. Եղիազարյան**, Քուչակյան թյուրիմացություն, թե՞ անիմացություն, Գրական թերթ, 2008, 25 հունվարի, **Վ. Եղիազարյան**, Նահապետ Քուչակը և նրա անունով մեզ հասած երգերը, Գրականագիտական հանդես, 2016:

[86] Տե՛ս **Ա. Երևանլի**, Հայ-ադրբեջանական ժողովրդական բանահյուսության կապերը, Эрмэни-азэрбайчан шифаһи халг эдэбийяты элагэлэри, Երևան, 1958, էջ 177, **Vasfi Mahir Kocatürk**, Saz Şiiri Antolojisi, Ayyıldız, Mtb. Ank. 1963, s. 21, **Əzizə Cəfərzadə**, Azərbaycanın aşıq və şair qadınları, Bakü, 1974, էջ 152-156, **Իսրաֆիլ Ապպասով**, Ազէրպայճան ֆօլկլօրու XIX Էսր Էրմէնի Մէնպալէրինտէ, Բաքու, 1977, էջ 23-32, **K. Pamukciyan**, Ermeni Harfli Türkçe Metinler, Aras yay. Ist., s. 107, **Mehmet Bayrak**, Alevi-Bektasi Edebiyatında Ermeni Aşıkları (Aşuğlar), Ankara, 2005, **Azad Nəbiyev**, Azərbaycan xalq

Նահապետ Քուչակի աշուղական երգերի քննությամբ և արժևորմամբ է պայմանավորված մեր ուսումնասիրության **արդիականությունը**, որով ևս հիմնավորապես հերքվում է հայրենների՝ Նահապետ աշուղ Քուչակին վերագրելու տեսակետը:

Ուստի մեր **նպատակն** է ընդգծել, որ հայագիտության մեջ Քուչակին թյուրիմացաբար վերագրված հայրենները նրա երգերը չեն. Քուչակ Վանեցին մի ինքնատիպ աշուղ է, որը գրել է հայերեն, հայերեն-պարսկերենախառն և թուրքերեն աշուղական երգեր: Մեր **խնդրո առարկան** աշուղ Քուչակ Վանեցու անձի և նրա աշուղական երգերի քննությունն է, որ կատարում ենք պատմական, պատմահամեմատական, կուլտուր-պատմական, վերլուծական, համադրական **մեթոդների** կիրառմամբ՝ հենվելով ձեռագրական-աղբյուրագիտական տվյալների վրա:

ՔՈՒՉԱԿ ՎԱՆԵՑԻ: Քուչակի մասին կենսագրական տեղեկություններ գրեթե չկան: Ստույգ վկայություն է Ստեփանոս Ջուղայեցու ձեռագիր հիշատակարանը. «Յիշեցեք զՔուչակ և միւս կենակից Թանգխաթուն: Դարձեալ յիշեցեք զՔուչակ և զմեծ պապն իւր՝ Նահապետ վարպետն, որ մականուն Աշըղ Քուչակ ասի»[87]: Ապա Ջուղայեցին նշում է նաև ձեռագրի ստացման թիվը. «Յիշեցեք զվերջին ստացող սորա, որ ստացաւ ի հալալ ընչից իւրոց Քուչակն, ի թուին Հայոց ՌՁՁ (1637)»[88]:

Փաստենք, որ սա 17-րդ դարի ձեռագիր հիշատակարան է, և պետք է համարել վավերական աղբյուր՝ հիմնվելով հենց այս

ədəbiyyatı, II hissə, Bakı, 2006, էջ 93-101 /http://elibrary.bsu.az/kis/1615.pdf, հասանելի էր 24.02.2017/, նաև Azərbaycan dastanları (toplayib nəşrə hazirlayan A. Nəbiyev-dir), Bakı, 1977, էջ 119-129 և այլն:

[87] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, կազմեցին **Վազգեն Հակոբյանը**, **Աշոտ Հովհաննիսյանը**, հտ. Բ, Ե., 1978, էջ 716: Հարկ է նշել, որ Ա. Ղազինյանը և Շ. Գրիգորյանը, որոնք վկայում են նաև Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 6332 ձեռագրի 211 ա էջի հիշատակարանի մասին, որը 1617 թ. արտագրել է Ղ. Փիրղալեմյանը, ծանոթ չեն 1637 թ. այս հիշատակարանի տպագրությանը: Այդ է պատճառը, որ Շ. Գրիգորյանի համար պարզ չէ, թե որտեղից է «վերցված, օրինակ, կրտսեր Քուչակի կողակցի՝ Թանգխաթունի անունը» (**Շ. Գրիգորյան**, Հայ աշուղական գրականության պատմություն, էջ 83):

[88] Անդ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ..... 3
ՔՈՒՉԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 3
ՔՈՒՉԱԿ ՎԱՆԵՑԻ 16
ՔՈՒՉԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ 23
ԲՆԱԳՐԵՐԸ ԿԱՋՄԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....49

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ
ԹՈՒՐՔԵՐԵՆ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ 51
ՀԱՅԵՐԵՆ ԵՐԳԵՐ 53
ԳՈՎԱՆՔ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՈՒՄԵՄՆ ԳՕՍԱՆԷ՝ ՔՕՉԱԿ
ՎԱՆԵՑՈՑ, ՕԳՆԵԱ ՀՈԳԻԴ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ 54
ԻՆՉ ՈՐ ԷԼ ՏԱՔ 59
ԱՌԱԿ ԼԱՒ ԵՒ ՊԻՏԱՆԻ 60
ՏԱՂ Ի ՎԵՐԱՑ ՄՈՍԿՈՎՈՒ ԹԱԳԱՒՈՐԻՆ 62
ՍԱՆԱՄԷՐ - ՔԱՒՈՐ 65
ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ
ԱՍԱՑԵԱԼ Է, ԸՆՏԻՐ ԵՒ ԱՆՈՑՇ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ 68

ԹՈՒՐՔԵՐԵՆ ԵՐԳԵՐ 73
ԽԷՐԽ ԱՅԱՂԻ ՎԱՐ 74
ՔԱՌՍՈՒՆ ՈՏՔ ՈՒՆԻ 75
ՄԱՆԻՆԵՐ Է 76
ՄԱՆԻՆԵՐ Է 77

ՀԷՐ ՍԱԲԱՀ 78
ԱՌԱՎՈՏ ԾԵԳԻՆ 79
ՆԷ ԿԱԻՋԱԼ ՍԻԼՄԻԾ 82
ԻՆՉ ԳԵՂԵՑԻԿ Է 83
ՊՈՒՍԱՑ ՏԱՂԼԱՐԻ 88
ԽԱՐԱՆ ՀԱՄԲՈՒՅՐԻ 89
ՎԱՐՍԱՂ ՔՕՉԱԿԻՆ 90
ՎԱՐՍԱՂ ՔՕՉԱԿԻՆ 91
ՎԱՆԼԻ ՔԵՕՉԱԿԻՆ 92
ՎԱՆԵՑԻ ՔՈՒՉԱԿԻՆ 93
ԴԱՐՏԼԻ ԲԻԼԲԻԼ 96
ԴԱՐԴՈՏ ՍՈՒՍԱԿ 97
ԲԷՆԴԻ ՄԱՀՈՒ 98
ԲԵՆԴԻ-ՄԱՀՈՒ 99
ՂՈՒԼԱՂ ԱՍՈՒՆ 100
ԱԿԱՆՋ ԱՐԵՔ 101
ՍՈՒՐՄԱՑ ՉԱՔՄԻԾ 102
ՍՈՒՐՄԱ Է ՔԱՇԵԼ 103
ԹԵՋՆԻՍ 104
ԹԵՋՆԻՍ 105
ԷՑ ԷՐԵՆԼԵՐ, ԱԼԴԸ ԲԵՆԻ 106
ՈՎ ԳԻՏՈՒՆՆԵՐ, ԻՆՁ ՏԱՆՋՈՒՄ Է 107
ԿԵԼ ՍԵՆԴԵՆ ԽԱԲԱՐ ԱԼԱՑԻՄ 108
ԱՐԻ ՔԵՋՆԻՑ ԽԱԲԱՐ ԱՌՆԵՄ 109
ԲԱՀԱՐ ՖԵՍԼԻ ՅԱՋ ՕԼՈՒՆԴԱ 110
ԳԱՐՆԱՆ ԹԱԳՈՎ ԱՄԱՌ ԵԿԱՎ 111
ԷՑ ԷՐԵՆԼԵՐ, ՄՈՒՍՈՒԼՄԱՆԼԱՐ 112
ՈՎ ԳԻՏՈՒՆՆԵՐ, ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐ 113
ԹԷՄԱՄ ՕԼՏԻ ԻԾԸՄԸՋ 114
ԱՎԱՐՏԵՑԻՆՔ ՄԵՐ ԳՈՐԾԵՐԸ 115

ՀԱՎԵԼՎԱԾ 116
ՔԱՌՅԱԿՆԵՐ 116

ԲՆԱԳՐԱՅԻՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 118
ԲԱՌԱՐԱՆ 146
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ 151
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 159
ԱՄՓՈՓՈՒՄ 165
РЕЗЮМЕ 165
SUMMARY 166

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Աշխատասիրությամբ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վանո Եղիազարյանի

НААПЕТ КУЧАК

АШУГСКИЕ ПЕСНИ

По трудам
доктора, профессора филологических наук
Вано Егиазаряна

NAHAPET KOUCHAK

ASHUGH SONGS

Under the research of
doctor of philological sciences, professor
Vano Eghiazaryan

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝
բ. գ. թ. **Արմեն Ավանեսյան**
բ. գ. թ., դոցենտ **Հերմինե Բաբուռյան**
Լևոն Սարգսյան

ԳՐԱԽՈՍՆԵՐ՝
բ. գ. դ. **Հենրիկ Բախչինյան**
բ. գ. դ., պրոֆեսոր **Թովմաս Պողոսյան**

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 10,75 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 100

Տպագրվել է «Նովել» տպագրատանը

ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն
հեռ.՝ +374-10347335, +374-95573130
Էլ փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24д. 48 кв
тел: +374-10347335, +374-95573130
Email: armav-hrat@mail.ru